ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/29

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.02.2019թ. թիվ 27/26-3/1520-19 գրությամբ «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 22.01.2019թ. թիվ 001/56 և 04.02.2019թ. թիվ 001/82 գրությունների հիման վրա, 05.02.2019թ. թիվ 27/26-3/1520-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/29 ընթացակարգի շրջանակներում 08.02.2019թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ> ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.01.2019թ. թիվ 001/56 և 04.02.2019թ. թիվ 001/82 գրություններով հայտնել է, որ ներկայացնում է «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից ճանաչված և պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակից՝ «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ի տվյալները, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու նպատակով, հետևյալ հիմնավորմամբ.

Պատվիրատուի 2019թ. կարիքների համար՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով, կազմակերպվել է «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգ:

22.11.2018թ. gnumner.am կայքում հրապարակավել է Ընթացակարգի հրավերը և հայտարարությունը:

29.11.2018թ. Ընթացակարգին մասնակցելու համար հայտ է ներկայացրել «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն:

29.11.2018թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից բացվել են ընթացակարգի հայտերը:

05.12.2018թ. վարվել են միաժամանակյա բանակցություններ ընթացակարգի բոլոր չափաբաժիններով հայտ ներկայացրած և ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ՝ առաջարկված գների նվազեցման նպատակով, քանի որ Ընթացակարգով գնումն իրականացվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Ընթացակարգի թիվ 18 չափաբաժնով «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն նվազեցրել է գնային առաջարկը:

12.12.2018թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի թիվ 3, 11, 13, 18 և 22 չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն: Արձանագրությունը հրապարակվել է gnumner.am կայքում 12.12.2018թ.:

24.12.2018թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի թիվ 3, 11, 13, 18 և 22 չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն: Արձանագրությունը հրապարակվել է gnumner.am կայքում 24.12.2018թ.:

24.12.2018թ. gnumner.am կայքում հրապարակվել է Ընթացակարգի արդյունում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

08.01.2019թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը էլեկտրոնային եղանակով «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին է ուղարկել Ընթացակարգի թիվ 3, 11, 13, 18 և 22 չափաբաժիններով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

16.01.2018թ. Պատվիրատուի մոտ ստացված գրությամբ՝ Ընկերությունը հրաժարվել է Ընթացակարգի թիվ 3, 11, 13, 18 և 22 չափաբաժիններով պայմանագիր կնքելուց:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/29 ընթացակարգի շրջանակներում 08.02.2019թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2019/29 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2019/29 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2018թ. ժամը 09:45-ի նիստի թիվ 5 արձանագրության 7-րդ կետով կայացված որոշմամբ «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 3, 11, 13, 18 և 22-րդ չափաբաժիններով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերությունը Ընթացակարգի թիվ 3, 11, 13, 18 և 22-րդ չափաբաժիններով ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո Ընկերությանը ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

4. Պատվիրատուն 08.01.2019թ. «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկել է «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

5. «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն 15.01.2019թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն հաղթող է ճանաչվել «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով մրցույթի 3, 11, 13, 18 և 22-րդ չափաբաժիններով: Սակայն Ընկերությունը ներկայումս հայտնվել է ֆինանսական և տեխնիկական դժվարին կացության մեջ, ինչի պատճառով մտավախություն կա, որ Ընկերությունը չի կարող ապահովել պայմանագրի պատշաճ և ժամանակին կատարումը:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ պայմանագրի կատարման ընթացակարգը ավելորդ ռիսկերից զերծ պահելու նպատակով «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն միակողմանիորեն հրաժարվում է պայմանագիր կնքելուց:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.02.2019թ. թիվ 27/26-3/1520-19 գրությունը, «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի 22.01.2019թ. թիվ 001/56 և 04.02.2019թ. թիվ 001/82 գրությունները և կից փաստաթղթերը, «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ի 15.01.2019թ. Պատվիրատուին ուղղված գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,</u>

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ և 14-րդ ենթակետերի համաձայն՝

13) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

14) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2018թ. ժամը 09:45-ի նիստի թիվ 5 արձանագրության 7-րդ կետով կայացված որոշմամբ «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 3, 11, 13, 18 և 22-րդ չափաբաժիններով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերությունը Ընթացակարգի թիվ 3, 11, 13, 18 և 22-րդ չափաբաժիններով ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո Ընկերությանը ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Պատվիրատուն 08.01.2019թ. «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկել է «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.4-րդ ենթակետով նախատեսվել է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության

առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

«Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն 15.01.2019թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն հաղթող է ճանաչվել «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով մրցույթի 3, 11, 13, 18 և 22-րդ չափաբաժիններով: Սակայն Ընկերությունը ներկայումս հայտնվել է ֆինանսական և տեխնիկական դժվարին կացության մեջ, ինչի պատճառով մտավախություն կա, որ Ընկերությունը չի կարող ապահովել պայմանագրի պատշաճ և ժամանակին կատարումը:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ պայմանագրի կատարման ընթացակարգը ավելորդ ռիսկերից զերծ պահելու նպատակով «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն միակողմանիորեն հրաժարվում է պայմանագիր կնքելուց:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ <u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում</u>, <u>եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>:

Այսպիսով՝ գտնում եմ, որ «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ն, 15.01.2019թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հրաժարվելով «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով պայմանագիրը կնքելուց, թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.02.2019թ. թիվ 27/26-3/1520-19 գրությամբ «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**